

ՐԱՅՅՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ԽՈՐԵՐՏ ԴԱՎԹՅԱՆ

Րաֆֆու հրապարակախոսությունն ավելի սուր բնույթ ստացավ XIX դ. 80-ական թվականներին: Ազգային-ազատագրական պայքարի իր իդեալը կենսագործելու և ժողովրդին այդ ազատագրախոսությամբ ղինելու բուռն տրամադրությամբ վիպասանը շարունակեց իր հրապարակախոսական գործունեությունը:

1880—1888 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում Րաֆֆու գրած հոդվածների մի մասը նվիրված է ռուս-թուրքական պատերազմին և դրա հետևանքով արևմտահայության համար ստեղծված դժվար պայմանների մեկնաբանմանը, Թուրքիայի և արևմտյան տերությունների դիվանագիտական խաղերի մերկացմանը: Մի շարք հոդվածներ արտացոլում են Հայկունու և մյուս պահպանողականների դեմ նրա մղած գրական բանավեճերը, մյուսները շոշափում են հասարակական այլևայլ խնդիրներ: Կյանքի վերջին տարիներին գրած որոշ հոդվածներ վերաբերում են «Խամոռայի լճի թրություններին» և Ղ. Աղայանի դեմ վարած բանավեճին, իսկ մի մասն էլ՝ վիպասանի ստեղծագործությունների թարգմանությունների հետ կապված հարցերին:

Գրողի այս շրջանի հրապարակախոսության խոշորագույն արժանիքներից մեկն այն էր, որ նա ազգային-ազատագրական պայքարի մեջ տեսնում էր նաև սոցիալական հակասությունների լուծման ելքը: Վիպասանը նշում է, որ ժողովուրդը մի զորություն է, որ երկար չի կարող լուսթյամբ տանել իրեն ստրկացնողների ճնշումներն ու հարձակումները: Նա մի օր պետք է ոտքի կանգնի, խորտակի իր շղթաները, թոթափի բռնակալի լուծը: Սա արդեն ազգային-ազատագրական շարժման հեղափոխական պայքարի կոադուն է: Նման գաղափարախոսությունը պատահական երևույթ չէր Րաֆֆու 80-ական թվականների հրապարակախոսության մեջ: Այդ միտքը եղել է նաև նրա բաղադրական հրապարակախոսության առաջին շրջանում: Դեռևս 60-ական թվականների նամակներից մեկում Րաֆֆին նշում էր, որ թուրքական բռնապետության ճնշման պայմաններն ախտաբանական են դարձրել հայ ժողովրդի հեղափոխական պոռթկումը: «Սուլթանի կառավարությունը օրեցօր սահմանափակում է, ստանալով խիստ ճնշյալ և կաշկանդյալ դրություն և հասարակաշրջա թշնամական հարաբերություններ հանկարծ կրոնիկ մի ազգու հեղափոխության բուցերը»¹:

Չնայած, որ այս շրջանում ևս Րաֆֆին տարված էր հայ ժողովրդի պատմական անցյալով, և նրա ստեղծագործական ներշնչման գլխավոր աղբյուրը ժողովրդի պատմությունն էր, բայց նա չի հրաժարվում նաև քաղաքական-հրապարակախոսական գործունեությունից: Ազգային-ազատագրական շարժումը համարում է գործնական պահանջ և անհրաժեշտություն, հարց, որը, ըստ հրապարակախոսի, կապված էր ազգային միասնության, ներքին ուժերի համախմբման, սերտ համագործակցության հետ: Րաֆֆին, օժտված լինելով օրվա խնդիրների և ժամանակի հանգամանքների մեջ կողմնորոշվելու բացառիկ հմտությամբ, հանդես բերելով ակտիվ շահագրգռվածություն ու եռանդ, շարունակում էր հետամուտ լինել հասարակական նոր հարցերի առաջադրմանը: Նույն ոգևորությամբ նա շարունակում է իր գործունեությունը «Մշակույթ» 1880 թ. հունիսի 17-ին, «Մշակույթ» լույս է տեսնում Րաֆֆու «Հայերը Քաբուլի մեջ» հոդվածը՝ գրված անգլիացի բաղադրական գործիչ Հյուդի համանուն վերնագրով հոդվածի առթիվ: Հոդվածի սկզբում Րաֆֆին թարգմանաբար քաղվածքներ է բերում Հյուդի հաղորդած տեղեկություններից: Փաստերից ելնելով, գրողը քննադատում է էջմիածնի անտարբեր ու անհոգ վերաբերմունքը՝ հեռավոր գաղթավայրերում ապրող հայերի նկատմամբ: «Մեկուկես դար առաջ նադիր շահը հայերից 200 ընտանիք տարել է Աֆղանստանի մայրաքաղաքի մեջ. այդ մեկուկես դարվա ընթացքում մեր եկեղեցականները նրանց մասին ոչինչ տեղեկություններ չեն ունեցել. նրանք մոռացված են եղել որպես ազգի ընդհանրությունից, նույնպես և ժողովրդի հովիվներից: Բայց հավատարիմ իր հայրենի կրոնին՝ հայը շինել է այնտեղ իր համար եկեղեցի և պատերազմելով բոլոր հայածանցների

¹ Ծ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Րաֆֆու ֆոնդ, № 15:

դեմ, սկսել է պաշտել իր կրոնը: Անցել են հարյուրավոր տարիներ, տարանջատյալ ժողովրդի հետ եղած քառանաները վախճանվել են, և նա մնացել է զուրկ բոլոր հոգեոր մխիթարություններից:— Մնվածները մնացել են առանց մկրտության, եկեղեցին մնացել է առանց ծամի և պատարադի, նեղեցյալները թաղվել են առանց քահանայի: Այնուհետև հայոց եկեղեցականներից ոչ ոք ուր չի կոխել այդ երկրի վրա²: Հողվածում Բաֆֆին առաջ է քաշում նաև տարբեր դավանանքի պատկանող հայերի ազգային միավորման խնդիրը և պահանջում, որ «կրոնական համոզմունքները խոնարհվեն այդ զաղափարների առջև...»³:

1880 թ. հուլիսի 15-ին «Մշակում» տպագրվում է Հրապարակախոսի «Մինչև ե՞րբ» հոդվածը՝ ուղղված «Մեղու Հայաստանի» լրագրի և մեղավականների դեմ: Քննադատելով մեղավականների ազգային նախապաշարմունքները, Բաֆֆին նշում է, որ նրանք, ազգայնության զաղափարը կապելով լուսավորչական եկեղեցու հետ, այլազգիներ էին համարում բոլոր այլազգական հայերին, դրանով իսկ սեպ խրոմ ժողովրդի միավորման գործի հաշտության մեջ: Կանխագուշակելով դրա վտանգը՝ Բաֆֆին գրում է. «Ամենաչեղձ ու ամենաանկեղծ ազգասերները շփոթում էին ազգը կրոնի հետ և կրոնը՝ եկեղեցու հետ: Եվ եկեղեցուց բաժանված անդամների վրա նայում էին որպես հեթանոսների վրա և նրանց այլևս հայ չէին համարում: Հայեր համարվում էին նրանք միայն, որ պատկանում էին լուսավորչական եկեղեցուն: Եվ այսպես ազգությունը և եկեղեցին կազմում էին մի անբաժանելի միություն, որի անշատումը, նրանց կարծիքով, կարող էր պատճառել երկուսի էլ մահացությունը»⁴:

Բաֆֆու մտահոգությունը տեղին էր. այդ դրությունը չէր կարող երկար պահպանվել, քանի որ խանգարում էր ազգի առաջադիմության օրենքներին: Անկարելի էր, որ ողջ ազգը պատկաներ միայն մեկ եկեղեցու. «Երկրագնդի վրա թե քաղաքակրթ և թե վայրենի ազգերի մեջ չ'յա և երբեք չի եղել մի ազգություն, որ մեկ եկեղեցու պատկաներ: Հայ ազգը իր հեթանոսական դարերում ուներ զանազան կրոնական աղանդներ՝ բուն հայկական, զրադաշտական, ասորական, հունական, հրեական և մինչև անգամ չինական,— և այդ բոլոր աղանդների խառնափնթորությամբ մեջ ազգությունը դարձյալ չէր կորցնում իր ամբողջությունը. ավելի ուժ ու զորություն ուներ»⁵:

Այդ հարցի կապակցությամբ անդրադառնալով «Մշակ»-ի ճիշտ կողմնորոշմանը, Բաֆֆին շեշտում է, որ վերջինս այդ հարցին միշտ էլ նայել է ազգային դիրքերից և կրոնի ու դավանանքի տարբերության համար երբեք չի վերաժողել որևէ մեկի ինքնասիրությունը. «Լրագրերը նպատակ է դրել հաշտարար լինել ազգի անջատված, թշնամացած և խորթացած անդամների մեջ, նրա պարտքն է լսել և հրատարակել յուրաքանչյուրի խոսքը: «Մշակ»-ի մեջ կարող են դրել որպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ, բողոքական, մահմեդական և հունադավան հայերը,— նա ազգային օրդան է և ոչ եկեղեցական»⁶:

Գրողը ըննադատում և հայության թշնամի է համարում այն կարճամիտ ազգասերներին, որոնք պնդում են, թե հայը լեզու չունի, հայրենիք չունի, որ նրա լեզուն, հայրենիքը և ընդհանրապես ազգային բոլոր առանձնահատկությունները սահմանափակված են միմիայն եկեղեցու (կրոնի) մեջ: Եկեղեցի նրա եկեղեցին, փոխեցիկ կրոնը, նա կքայքայվի ու կզաղարի գոյություն ունենալուց: Այդպիսի կարծիք կարող են ունենալ միայն այն սահմանափակ ու տգետ գործիչները, որոնք ազգային խնդրի հարցում խիստ նեղ դատողություններ ունեն: Այստեղ հրապարակախոսը զայրույթով գրում է. «Եթե իսկապես հայը զրկված է իր ազգային լեզվից, զրկված է իր հայրենիքից, կորցրել է իր ցեղական առանձնությունները և պահպանվում է միմիայն եկեղեցու գրկում, այն ժամանակ նրան ազգ պետք չէ համարել: Մի այսպիսի ազգի համար շարժանադարձ, շարժան մտածել անգամ, որովհետև նա կքայքայվի, կլուծվի և կանհետանա զանազան ազգությունների մեջ, երբ իր պաշտպանության համար ուրիշ հիմք չունի, բացի կրոնը»⁷: Հրապարակախոսը թերահավատորեն չի մոտենում ազգին, մեծ է նրա հավատը հայ ազգության, նրա լեզվի ու դրականության, պատմական անցյալի ու զալիքի հանդեպ: «Մենք հավատում ենք, որ նա ունի իր պատմական հայրենիքը և տակավին բնակվում է իր հայրենիքի հողի վրա, մենք հավատում ենք, որ նա ունի իր որոշ ցեղական հատկությունները, որ դարերի ընթացքում չեն

2 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 24:

3 Նույն տեղում, էջ 27:

4 Նույն տեղում, էջ 29: Մեղեբրություններում արված ընդգծումները Բաֆֆուն են:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 31:

7 Նույն տեղում, էջ 32:

փոխվել, և վերջապես, մենք հավատում ենք, որ նա ունի իր հատուկ ազգային եկեղեցին: Լեզու, Կալեբեթ, Եկեղեցի, ցեղական առանձնահատկություններ, ահա այն գլխավոր հիմունքները, որոնցով, հավատացած ենք, կպահպանվի մեր ազգությունը⁸:

Քննադատելով ազգի առաջնորդների և ազգասերների այն տեսակետը, թե հայերը միայն լուսավորչականներն են, Բաֆֆին մեղադրում է նաև Թուրքիային, որն օգուտ է բերում հայերի որոշ մասի մոտ երևան եկած տգիտությունից: Հրապարակախոսը գտնում է, որ, Սան-Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի ավագածոցովի 61-րդ հոդվածների համաձայն, Թուրքիան պարտավոր էր վերանորոգումներ մտցնել իր պետության՝ հայերով բնակեցված գավառների մեջ, սակայն, հայերի թիվը հաշվելով միայն լուսավորչականներով, Թուրքիան Եվրոպային պատասխանեց, թե իր պետության մեջ հայերն այնքան չնչին փոքրամասնություն են կազմում, որ չարժեք մինչև անգամ նրանց համար առանձին վերանորոգումներ անել: Ելնելով այս ամենից, Բաֆֆին բարձրացնում է կրոնի և ազգության խնդիրը. «Մենք ազգ ենք, և ազգի մեջ կան զանազան եկեղեցիներ՝ լուսավորչական, բողոքական, կաթոլիկ և այլն: Եվ այդ կազմակերպությունից ինքնուստիջյան պետք է առաջ դար կրեցական և ներգաղթյալներ և համագործակցի ազատությունը: Երկրացիներով եվրոպական պետությունների կողմից, հոգսում հայերին առաջադրված հարցերից խույս տալու՝ Թուրքիայի դիվանագիտական խառնուրդը, Բաֆֆին 1880 թ. հոկտեմբերի 2-ին «Մշակում» տպագրում է «Փախուստի ճանապարհը» հոդվածը. որտեղ գրում է. «Խոստանալ և չկատարել— այդ Թուրքիայի վաղեմի սովորությունն է: Իսկ բարիք խոստանալ և չարք գործադրել— այդ պահանջում է նրա այժմյան ամենախառնուրդալից քաղաքականությունը⁹: Բացատրելով Թուրքիայի քաղաքականության կորստաբեր հետևանքները հայ ժողովրդի համար, գրողը կոչ է անում չհավատալ ոչ Թուրքիային, և ոչ էլ եվրոպական պետություններին շուրջած խոստումներին և հենվել միայն ու միայն սեփական ուժերի վրա:

Նույն թվականի օգոստոսի 26-ին «Մշակում» լույս է տեսնում «Նպաստներ» հոդվածը: Հոդվածը գրելու շարժառիթը եղել է Կ. Պոլսում ստեղծված տարբեր ընկերությունները համախմբելու և դրանք մի նպատակի համար ծառայեցնելու՝ Բաֆֆու մտադրությունը: Հրապարակախոսը արևմտահայերին կոչ է անում հետևել հնդկահայերի և ուսահայերի օրինակին, նպաստել «Միացյալ ընկերության» գործունեությանը: Նա նշում է, որ Ռուսաստանի հայերը, բնակվելով մեծ սլետության հովանավորության ներքո, ավելի բարեբախտ վիճակի մեջ են գտնվում, րան տաճկահայտակ հայերը: Հրապարակախոսը նպատակ ունի Թուրքիայի հայերի համար նյութական միջոցներ ձեռք բերել՝ դպրոցները կանոնավորելու և ազգային լուսավորչական գործը բարելավելու համար:

Չնայած, որ Բաֆֆին իր հրապարակախոսական գործունեության երկրորդ շրջանում շատ կարճ աշխատակցեց «Մշակին» (1880—1884), բայց թողեց մի շարք ուշագրավ հոդվածներ, որոնցում ամբողջությամբ երևաց հրապարակախոսի, քննադատի, քաղաքական ու հասարակական դիրքի կերպարի ամբողջական պատկերը: Նա «Մշակում» տպագրել է նաև մի քանի նամակ-հոգովածներ՝ ուղղված մամուլի որոշ գործիչների ու նշանավոր հրապարակախոսների «անմարտ» գործունեության դեմ: Մեհդու Հայաստանի» լրագրի 1883 թ. 7-րդ համարում Սպանդար Սպանդարյանը տպագրում է «Մի փոքրիկ խորհրդածություն» հոդվածը, որտեղ պաշտպանում է մեղավորների կողմից առաջ քաշած՝ լրագրի 25-ամյակը նշելու հարցու «Մշակին» շուրջը համախմբված մտավորականությունը գտնում էր, որ «Մեհդու Հայաստանին» հայ իրականության մեջ դեռևս չի կատարել մի այնպիսի դեր, որ արժանի լինի հոգեվանական արարողության: Սպ. Սպանդարյանը հանդես է գալիս «Մեհդու» դիրքերի պաշտպանությամբ: Հոգովածում նա Պ. Պոռչյանի և Ղ. Աղայանի հետ «Մեհդու» համախոհ է համարում նաև Բաֆֆին: «Մեհդուն» սլաքն ու ժամանցույցն է, իսկ Պոռչյանը, Աղայանը և Բաֆֆին նրա ժամանակը որոշող նշաններն են¹¹: — գրում է Սպ. Սպանդարյանը: Բաֆֆին խիստ վերավորվում է նման բնորոշման և ձևական մեղմեցման դեմ, քանի որ մեղավորների պաշտպանությամբ երբեք հանդես չէր եկել: 1883 թ. փետրվարի 2-ին «Մշակին» ուղարկած «Նամակ խմբագրին» հոդվածում Բաֆֆին գրում է. «Եվ և «Մեհդուն» լրագրի մեջ ոչ մի առնչություն չկա, ուրեմն և մտքերի ու գաղափարների

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 34:

¹⁰ Նույն տեղում, էջ 37:

¹¹ Սպանդար Սպանդարյան, Մի փոքրիկ խորհրդածություն («Մեհդու Հայաստանին», 1883, № 7):

համերաշխություն լինել նույնպես աներեւակայելի է: Մեղուի խմբագիրը գիտե, որ ես Մշակի գաղափարների ամենամոլեռանդ քարոզողներից մեկն եմ...¹² Խոսելով իր և մեղավականների տարիների անհաշտ պայքարի մասին, Բաժնին նշում է, որ Մեղուն միշտ աշխատել է հալածել ու հարվածել նշանավոր հրապարակախոսներ Ստ. Նազարյանցին, Մ. Նալբանդյանին, Ալվազովսկան: Մեղուն հալածել է և ինձ: Նա աշխատել է թե գրական վաստակները և թե իմ անձնավորությունը միշտ սե գույներով ներկայացնել հայ հասարակությանը¹³: Հրապարակախոսը բացահայտում է Մեղվի թերի կողմերը, նրա անբարյացակամությունը իր աշխատությունների վերաբերյալ: Նա դատապարտում է մեղավականներին, որոնք երկդիմի քաղաքականությամբ ցանկանում են երկպառակություն ստեղծել իր և Մշակի խմբագրի միջև:

Բաժնու հոգևածի հրապարակումից հետո կրքերն ավելի են բորբոքվում: Մեղվի խմբագիր Պետրոս Սիմոնյանը լրագրի 1883 թ. 11-րդ համարում տպագրում է մի ֆելիետոն, որի սուր ծայրն ուղղված էր Գ. Արծրունու և Բաժնու դեմ: Պ. Սիմոնյանը, վերջիններիս անվանելով հեքիաթագիրներ, ծաղրում է նրանց գրական ու հասարակական վաստակը: Նման վերաբերմունքը զայրացնում է Բաժնուն և առիթ տալիս, որ Մշակում տպագրի Մամուլի անբարյացակամությունը ծավալուն հոդվածով: Հոդվածում Բաժնին խիստ քննադատում է Մեղվի խմբագրին, բացահայտում նրա անազնիվ ու հասարակական անմաքուր գործունեությունը: Պատասխանելով ֆելիետոնում իր հասցեին արված ակնարկներին, Բաժնին գրում է, որ Պ. Սիմոնյանը «մի իսկական խալաթագիր է», որ հասարակական ու կրոնական հարցերի առիթով նրա բարձրացրած աղմուկը միայն ձեռնարկ է կրում, դառնում ժողովրդի կրոնական զգացումները հարստահարելու միջոց¹⁴: Պ. Սիմոնյանը ևս լուրջությամբ չի կարողանում տանել Բաժնու դիտողություններն ու վերավորանքները: Նա Մեղու Հայաստանի լրագրի 1883 թ. 17-րդ համարում տպագրում է մի նոր ֆելիետոն, որն ամբողջությամբ ուղղված էր Բաժնու դեմ:

Մշակում և Մեղու Հայաստանի լրագրերի միջև պայքարը գնալով սուր բնույթ էր ստանում: Այն ավելի ծավալվեց «Կայծեր» վեպի լույս տեսնելուց հետո: 1883 թ., վեպի հրապարակումից մեկ ամիս անց, Մեղու Հայաստանին իր էջերը լցնում է Հայկունու վայրախոսություններով: Դրա հիմնական պատճառը հոգեորականության նկատմամբ Բաժնու քննադատական վերաբերմունքն էր: Իսկ վիպասանի քննադատությունը երևում էր ոչ միայն հրապարակախոսական հոգվածներում, այլև գեղարվեստական ստեղծագործություններում: Հայկունին իր հոգվածներում¹⁵ բողոքում էր, որ իբր թե Բաժնին «ամբողջ ազգի սրբությունները ծաղրի է ենթարկում, դառնում ամբոխի ջատագովը՝ հայ դեմոկրատիայի գաղափարախոսը, դրա մեջ տեսնելով վիպասանի ամենամեծ մեղքերը: Քննադատը, որպեսզի կարողանար փոխել «Կայծերի» թողած հսկայական տպավորությունը, վեպը համարում է հեքիաթ, իսկ Բաժնուն՝ հեքիաթագիր: Հայկունին խիստ բացասական կարծիք է հայտնում «Կայծերի» հերոսների մասին, քննադատում նրանց գործունեությունը: Իսկ որպեսզի ցարական ժանդարմների վարչության ուշադրությունը հրավիրվեր Բաժնու վրա, վերջինիս համարում է Զերնիշեկու և Նալբանդյանի գործի շարունակողը: Բաժնու պաշտպանությամբ հանդես է գալիս միայն Լեոն: Նա Մշակում (1883 թ., № 118—119) հրապարակում է «Կրիտիկան մեր մամուլի մեջ» հոդվածը՝ ուղղված Բաժնու հակառակորդների և մամուլի կեղծ գործունեության դեմ:

1883 թ. սեպտեմբերի 30-ին, Փավստոս ստորագրությամբ, Մշակում տպագրվում է Բաժնու «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը» մեծածավալ բանավիճային հոդվածը, որը վիպասանի հրապարակախոսական գործունեության մեջ բացառիկ կարևոր տեղ ունի: Դրանում երևում է հրապարակախոսի անզիջում պայքարը պահպանողականների դեմ: Ի հայտ բերելով իր գեղարվեստական առաջադեմ ըմբռնումները, Բաժնին հանդես է գալիս գրականության բարձր և ճշմարիտ գաղափարայնության պաշտպանությամբ: Նա մերկացնում է Հայկունուն՝ որպես ծախու գրչակի, անխնա քննադատում «Կայծերի» մասին նրա միտումնավոր աղավաղված տեսակետներն ու գաղափարները: Պահպանելով իր դավանած սկզբունքները, հրապարակախոսն ավելի է խորացնում քննադատությունը և պայքարը Հայկունու ու նրա կողմնակիցների դեմ: Քննադատելով իր հակառակորդի գեղագիտական անկարողություններն ու գեղարվեստի նկատմամբ ցուցաբերած սուբյեկտիվությունը, Բաժնին գրում է. «Գեղարվեստը ճանաչելու, գեղարվեստը գնա-

¹² Բաժնի, նշվ. աշխ., էջ 55:

¹³ Նույն տեղում, էջ 56:

¹⁴ Նույն տեղում, էջ 10:

¹⁵ Տե՛ս Մեղու Հայաստանի, 1883, № 31—37, 39, 57:

հատելու համար պետք է զարգացած ճաշակ, ազնիվ զգացմունք և գիտելու խորին ընդունակություն ունենալ: Գրեցեք Ռաֆայելի «Մադոննան» կամ Ալվադովսկու ծովանկարներից մեկը մի կոշտ, կոպիտ ուսկի առջև: Նա միայն ապուշի նման կնայն և արհամարհանքով երեսը շուռ կտա: Այսպես է պ. Հայկունին դատում իր անձնական տպավորությունների ներգործության ներքո, առանց հիմնվելու արվեստի և գրականության մեջ ընդունված պայմաններին: Նա անխտիր կերպով գործ է ածում «գեղարվեստ», «Պառնասի մուսանների ստեղծագործություն», «գեղարվեստական տաճար» բառերը, խոհեմությամբ լռելով, թե ի՞նչ է հասկանում այդ փքված բառերով¹⁶, Հրապարակախոսն այնուհետև նշում է, թե ցանկալի կլիներ, որ Հայկունին ներկայա-նար գեղարվեստի օրենքներով ու փաստերով նվ իրոք, միայն Հայկունու արտահայտած կարծիքով («Եվածերը հեքիաթ է անվանում»), հարցը վճռված չի կարելի համարել: Գեղարվեստական ստեղծագործությունը գնահատելու համար հարկավոր է կերպարների խոր և հոգեբանական վերլուծություն կատարել: Մի բան, որ Հայկունու հոգվածում պակասում է: Րաֆֆին ապացուցում է, որ «Եվածերը» ոչ հեքիաթ է, և ոչ էլ ծրագիր, ինչպես ջանում է ցույց տալ իր հակառակորդը: Զիշտ կողմերով է վիպասանը արժեքավորում իր վեպը՝ այն համարելով «ժամանակակից վեպ»՝ այդ բառի կատարյալ իմաստով...¹⁷: Րաֆֆին ոչ միայն պատասխան հարված է հասցնում սխալ դատողությունների տեղ Հայկունուն, այլև գեղարվեստի ու քննադատի դասեր տալիս նրան: Րաֆֆին գրում է. «Պ. Հայկունու հոգվածը մի անկապ, խառնիխուռն և վայրկյանը գրված է: Նա ոչ միայն կրիտիկա չէ, այլ պոլեմիկա կոչվելու արժանավորությունից զուրկ է: Պոլեմիկայի մեջ առաջնորդում է քննադատի առողջ միտքը, քննելի առարկայի ճիշտ և խզմտավոր հասկացողությունը: Բայց երբ առողջ դատողության տեղ գործում է կիրքը, նախանձը, ատելությունը, անվանարկությունը դեպի հակառակորդի անձնավորությունը, — այդ դեպքում պոլեմիկան դառնում է մի զզվելի պամֆլետ և մինչև անգամ դիֆամացիա: Պ. Հայկունու հոգվածը վերջին տեսակներիցն է պետք է վերաբերել»¹⁸:

Հայկունու հոգվածները լի էին միմյանց հակասող մտքերով: Նա, ընկնելով մոլորությունների մեջ, «Եվածերը» մի դեպքում հեքիաթ է անվանում, մեկ այլ դեպքում՝ ծրագիր և հետո էլ՝ վեպ: Այնուհետև գրում է, որ «Եվածերը» մեջ չկան ոչ անցյալի և ոչ էլ ներկայի կյանքը, այն ոչ ուսումնական վեպ է և ոչ էլ ժամանակակից: Նման սխալ դատողությունները նրան գցում են բազմաթիվ հակասությունների մեջ: Եթե «Եվածերը» ոչ պատմական վեպ է և ոչ էլ ժամանակակից, և եթե նրա մեջ չկա ոչ անցյալի և ոչ էլ ներկայի կյանքը, ապա այստեղից էլ ծագում է այն միտքը, որ «Եվածերը» հերոսները, վեպում գործող անձինք գոյություն չեն ունեցել ոչ անցյալում, այսինքն՝ հայ պատմական կյանքում և ոչ էլ գոյություն ունեն այժմ: Նշանակում է, նրանք Րաֆֆու երեակայության ծնունդն են լուրի: Այս դեպքում էլ որտեղ մնաց տրամաբանությունը, եթե Հայկունին «Եվածերը» հերոսներին համեմատում է Արովյանի, Աղայանի, Պռոշյանի, Մերենցի վեպերի հերոսների հետ, նրանց մեջ տեսնելով ընդհանուր և կատարյալ նմանություն: Բերենց Հայկունու հոգվածից մի հատված. «Եվածերը» ամենազլխավոր գործողը — սանը տիպը — որտեղ Ավոն, ոչ այլ ոք է, եթե ոչ ա) պ. Արովյանի Աղասին, բ) Աղայանի Հարությունը. գ) պ. Պռոշյանի Վարդը, դ) պ. Մերենցի Թեոդորոս Ռշտունին և նույն հեղինակի Լեոնը («Թորոս Լեոնիս մեջ»), ե) պ. Րաֆֆի իրան Մելիք Մանուրը («Խենթի» մեջ)¹⁹: Եթե Հայկունու նման դատողություններն ու համեմատությունները ճշմարիտ համարենք, մեր վիպասանները, առանց լացառության, օգտվել են միմյանցից կամ իրենց տիպերը գողացել են իրարից: Իհարկե, Հայկունու «քննադատությունը» չէր կարող սպանել ճշմարիտ տաղանդը, մանավանդ, որ ընթերցող հասարակության համակրանքը Րաֆֆու անձի և ստեղծագործությունների նկատմամբ գնալով մեծանում էր ու ամրապնդվում: Նրան հարգում և նրա դրքերը սիրով էին կարդում: Րաֆֆին միտում է Հայկունու գրադատությունները, անհիմն մեղադրանքները, շար գիտավորությունը, «Մեղու Հայաստանի» լրագրի անհարկի բամբասանքները: Սակայն Հայկունին շարունակում է իր գրադատական դատողությունները: Նա հանդես է գալիս «Երկրորդ պատասխան» հոգվածով, որը տպագրվում է «Մեղու Հայաստանի» լրագրի 1883 թ. 104—109, 113, 115, 117 համարներում: Հայկունին, խախտելով բարոյականության բոլոր նորմերը, Րաֆֆուն դարձյալ համարում է «ամբոխի երկրպագու», մեղադրելով վիպասանին, հրապարակախոսին ու քաղաքական գործչին:

16 Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 72:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 74:

19 Նույն տեղում, էջ 78:

այն բան համար, որ իբր թե նրան հետևում է միայն ամբողջը և որ ոչ մի դասակարգ նրա գործունեության օգտակարությունը չի տեսնում: Հայկունու հողվածները առանձին գրքով հրապարակվում են Բաքվում՝ կից ունենալով բժիշկ Արամյանի նամակը, որը նույնպես մի ստոր հարձակում է հրապարակախոսի գաղափարների դեմ: Նամակում «Կայծեր» վեպը դիտվում է իբրև հեղափոխական գործ, իսկ հեղինակը մեղադրվում է «ռամկամիտ ամբոխի խոստացած բռնակալությունը» ծափահարելու համար²⁰:

«Կայծերի» առիթով առաջացած բանավեճը և Հայկունու քննադատությունը սահմանները չեն հարձակում են: Րաֆֆու դեմ հանդես է գալիս նաև Ղ. Աղայանը: Երբ լույս տեսավ «Կայծերի» առաջին հատորը, Ղ. Աղայանը հափշտակված դրանով, մեծ ոգևորությամբ հանդես եկավ ներքաշ-բանաստեղծությամբ: Ուրեմն, Աղայանը «Կայծերի» նկատմամբ ունեւր դրական կարծիք և նույնիսկ իր «Սառնամանիք» վերնագրով բանաստեղծությունը նվիրել է այդ գրքին: Իսկ 1887 թ.-ի երբ լույս է տեսնում վեպի երկրորդ հատորը, Աղայանը առաջիններից մեկն էր, որ իր բացասական վերաբերմունքն արտահայտեց վեպի մասին: «Աղբյուրի» նույն թվականի 8—9 համարներում հրապարակած «Իմ ստացած տպավորությունը պ. Րաֆֆու «Կայծերի» երկրորդ հատորից» վերնագրով հոդվածում Աղայանը ոչ միայն քննադատում է վեպը, այլև անվանարկում հեղինակին, «շառլատան և խաչագող համարելով» «Կայծերի» հերոսներին: Այս հանգամանքը առիթ է դառնում, որ Րաֆֆին «Արձագանքում», որին նա աշխատակցում էր 1885 թ., հանդես գա «Պարոն Ղ. Աղայանի հասցեին» վերնագրով հոդվածով և «Բրուտի շունը» բանաստեղծությամբ²¹: Ղ. Աղայանը գրում է պատասխան հոդված: Սակայն «Արձագանքը» այն չի տպագրում: Ղ. Աղայանի գալուցիվը մեղմանում է միայն այն ժամանակ, երբ «Աղբյուր» ամսագիրը տպագրում է «Առ պ. Րաֆֆին» վերնագրով ծանուցումը և պահանջում, որ Րաֆֆին շտկի իր սխալը: Ղ. Աղայանը ի պատասխան «Բրուտի շունը» ոտանավորի, անվանարկում է Րաֆֆուն, վիրավորական խոսքեր ասում նրա հասցեին²²: Վեճը սուր բնույթ է ստանում: 1887 թ. «Արձագանքի» 47—48-րդ համարում կրկին հանդես է գալիս Րաֆֆին, հրապարակելով «Պարոն Ղ. Աղայանի հասցեին» հոդվածը: Խնդիրը պարզ էր. Րաֆֆին ցանկանում էր ապացուցել Աղայանի հակասությունների և հակակրթությունների պատճառները, նրան փաստերով համոզելու, որ «Կայծերի» առաջին հատորի առիթով ասված համակրանքի խոսքերը, կարճ ժամանակաշրջանում, չպետք է վերածվեին անազնվության, հերյուրանքների: Ինչով բացատրել Աղայանի հակասությունները, մանավանդ, որ «նույն հերոսները կային և նույն բնավորությամբ գործում էին «Կայծերի» առաջին հատորի մեջ ևս: Բայց այն ժամանակ այդ «շառլատանները» իրենց գործունեությամբ բորբոքում էին պ. Աղայանի բանաստեղծական ոգևորությունը: Հանկարծ նա սառեց և նրա իդեալները «խողեր» դարձան: ...Կամ նրա առաջին փառաբանությունները պետք է համարել պարզ շողորթություն, որով կամեցել է հաճոյանալ «Կայծերի» հեղինակին՝ մեզ, կամ վերջին հայհոյանքները պետք է համարել շարանախանձ, ստոր վարմունք²³, մինչդեռ «Կայծերը» իրոք կմնա գեղարվեստական բարձրագույն ստեղծագործություն, և բնավ էլ կարոտ չէ այնպիսի անձանց գովասանքներին, որոնք պատրաստ են իրենց համոզմունքները ամեն բոլոր փոխել, «նայելով թե քամին որ կողմից է փչում...»²⁴:

Աղայանի և Րաֆֆու միջև ծագած այս բանավեճի անմիջական ազդեցության տակ Րաֆֆին գրում է «Վիպագրությունը ուսահայերի մեջ» հոդվածը, որը մեծ աղմուկ է բարձրացնում գրական շրջաններում: «Վիպագրությունը ուսահայերի մեջ» հոդվածի գրության թվականը հեղինակի, ինչպես նաև հրատարակիչ Աննա Րաֆֆու կողմից չի յշված: Գ. Արծրունի հոդվածի մոտավոր թվականը համարում է 1886—87-ը, իսկ «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը նշում է, որ այն գրվել է 1888 թ. հունվարին²⁵: Ավելի հավանական է վերջին վկայությունը, քանի որ Աղայանի և Րաֆֆու միջև տեղի ունեցած բանավեճը, որի անմիջական ազդեցության ծնունդն է այս հոդվածը, տեղի է ունեցել 1887 թ. վերջերին, ուստի հոդվածը չէր կարող ավելի վաղ գրված լինել: Հրապարակախոսի մահից հետո հոդվածը տպագրվում է «Մշակում» և առիթ դառնում ընդարձակ բանավեճի: Գրական բանավեճը ծավալվում է մի կողմից «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու և մյուս կողմից՝ «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանի միջև: Այնուհետև

20 Հայկունի, Րաֆֆու «Կայծերը», Բաքու, 1884, էջ 8:

21 Տե՛ս Րաֆֆու, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1957, էջ 104:

22 Ղ. Աղայան, Առ պ. Րաֆֆին («Աղբյուր», 1887, № 11, էջ 109):

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում, էջ 634:

բանավեճին մասնակցում են նաև «Նոր դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանը, Աննա Րաֆֆին, Սիմոն Հախումյանն ու Երվանդազեն:

«Արձագանք»-ը և «Նոր դար»-ը Արծրունուն մեղադրում են հոգվածի աղավաղման համար: Արդար Հովհաննիսյանն ու Երվանդազեն պնդում են, որ «Մշակի» խմբագիրը իրավունք չունի հոգվածից հանելու Ղ. Աղայանին ու Պ. Սիմոնյանին վերաբերող մասերը: Այս առիթով «Մշակում» հանգես է գալիս Աննա Րաֆֆին և պարզաբանում, որ ինքն է հանել Աղայանին և Սիմոնյանին վերաբերող առդերը, ինչպես նաև «Փորձի» և «Արձագանքի» մասին գրված հատվածը²⁶: «Եր. Ներկայացնում Րաֆֆու այս ընդարձակ հոգվածը, ի՞նչ խնդիրներ էր առաջ բաշում, որ բանավեճի առիթ հանդիսացավ: Նախ ասենք, որ հայ գրականության անցյալի, պատմական, գիտությունների և ապագա գրականության լավագույն մեկնաբանություններն ու հայ վիպագրության ստեղծման և առաջացման պատմությունն է տալիս Րաֆֆին այս հոգվածում: Վիպասանը նշում է, որ հայ վիպագրության առաջին հիմնաքարը դրել է Խ. Աբովյանը, որը գրական արվեստի ճշմարիտ վարկետ է: Նա գրում է. «Բայց վիպագրությունը չէր կարող միշտ զեղչկական կյանքի նեղ, սահմանափակ շրջանակի մեջ մնալ, մանավանդ, որ Աբովյանից հետո չհայտնվեցան զորեղ տաղանդներ, որ ավելի խոր թափանցեին գյուղական կյանքի բոլոր ծալքերում և նրա մեծ նոր տարրեր, նոր երևույթներ գտնելով, ավելի հետաքրքիր դարձնեին իրենց աշխատությունները²⁷: Գրողը նշում է, որ Աբովյանի հետնորդներն ու նրա աշակերտները հայկական վիպերում պատկերում էին միմիայն հայ ազգին վերաբերող պատմություններ, մոռանալով և երբեմն մերժելով օտարազգիներին, մի հանգամանք, որին Աբովյանն իր գրքում լայն տեղ է տվել:

Րաֆֆին իր քննադատական խոսքն է ասում նաև «Հյուսիսսփայլ»-ը ամսագրի հասցեին: «Ճիշտ է, «Հյուսիսսփայլ»-ը հայ մշակույթի, հրապարակախոսության, մամուլի պատմության բնագավառում խոշոր դեր կատարեց և էտապային նշանակություն ունեցավ, բայց հայ վիպագրության զարգացման գործում այնքան էլ ակնառու չէին նրա բերած նորությունները: Դա միանգամայն հասկանալի էր, քանի որ օտար հողի վրա, հեռավոր Մոսկվայում, նրա գործունեության շրջանակները այդ հնարավորությունը չէին տալիս: «Հյուսիսսփայլում» վիպագրության հարցերը նեղ շրջանակներից դուրս չէին գալիս, և երբեմն էլ ստանում էին մասնավոր կերպարանք: «Եվ այսպես «Հյուսիսսփայլ»-ը հայոց վիպագրությանը ընկալություն, և անկարող էր նպաստել, որովհետև նա հայոց կյանքից անշատված էր: Նա նպաստեց միայն բանաստեղծության և ավելի քնարերգական բանաստեղծության²⁸, Րաֆֆին ավելի ընդարձակ քննության է առնում «Մշակի» գործունեությունը, նրա դերը գրականության, մամուլի, հրապարակախոսության, հասարակության գաստիարակման և բազմաթիվ այլևայլ հարցերի գործում: «Մշակը» ընդարձակեց, լայնացրեց հայկական աշխարհի նեղ հորիզոնը: Ոչ միայն ռուսաստանցի հայի, այլ ամենուրեք, ուր որ հայեր էին ապրում,— բոլորի գործերն ու կյանքը նրա քննադատության առարկան դարձավ: Նա առաջինը եղավ, որ ծանոթացրեց ռուսահայերին իրենց տաճկաստանցի, պարսկաստանցի, հնդկաստանցի և երկրազնդի զանազան կողմերում ցրված եղբայրների հետ, որոնք առաջ մոռացված և մինչև անգամ արհամարհված էին: Նա ուղղորդում դարձրեց և հայի գրացի օտարազգիների վրա, որոնց վիճակի ուսումնասիրությունը հայոց լրագիրը յուր պարտքը չէր համարում²⁹,— գրում է Րաֆֆին: Միանգամայն իրավացի էր Րաֆֆին, որ գովեստով էր խոսում «Մշակի» մասին: Իրոք, «Մշակը» հայ հասարակայնությանը սովորեցրեց մտածել իր կարևոր և անհրաժեշտ խնդիրների, ինքնաճանաչողության ու թերությունների մասին: Ինչպես նշում է գրողը, «Մշակի» ուղղությունը խիստ բարեբար ազդեցություն ունեցավ հայ վիպագրության վրա: Լրագիրը վիպագրության հարցերը բարձրացրեց, գրեց լայն շրջանակների մեջ: Այն դուրս եկավ «Աբովյանի շկուլի» զեղչկական նեղ շրջանից և սկսեց խորը թափանցել ու հետազոտել ժողովրդի կյանքի բոլոր կողմերը, նա թափանցեց զանազան դասակարգերի ու խավերի մեջ, ասպարեզ հանեց գրական նոր տիպարներ, նոր երևույթներ³⁰: Լրագրի շնորհիվ ուժեղացավ քննադատական ոգին, վիպագրության հարցերը գրվեցին իրական հողի վրա: «Մշակը» զնահատելի ծառայություն մատուցեց նաև գրական լեզվի զարգացման, գեղեցկացման ու հարստացման գոր-

²⁶ Տե՛ս «Մշակ», 1889, № 12, 15, 19:

²⁷ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 152:

²⁸ Նույն տեղում, էջ 154:

²⁹ Նույն տեղում, էջ 155:

³⁰ Նույն տեղում, էջ 15:

ծում: Այնուհետև Բաֆֆին հոգովածում խոսում է նաև հայ Հրապարակախոսության և վիպագրության ասպարեզում իր գործունեության, կատարած ծառայությունների և բերած նորությունների մասին:

Արծրունու և Բաֆֆու միջև ծագած անհամաձայնության պատճառով վերջինս 1884 թ. հեռանում է Մշակից: Դեռևս 1883 թ. Բաֆֆին Արծրունուն առաջարկում էր վերակառուցել «Մշակի» աշխատանքները, խմբագրության կազմում հավաքագրել նոր և թարմ ուժեր: Արծրունին համաձայնում է, սակայն գործը շարունակում է նախկին ձևով: Բաֆֆին դադարում է աշխատակցել «Մշակին»: Լրագրի ընդհանուր մակարդակը ընկնում է, բաժանորդների թիվը պակասում: 1884 թ. փետրվարի 11-ից սկսած «Մշակը» հրատարակվում է շաբաթական երկու անգամ: 1884 թ. հուլիսի 11-ին «Մշակը» դադարում է լույս տեսնել: Արծրունին մեկնում է Շվեյցարիա: Բաֆֆին, իր շուրջը համախմբելով Գաբրիել Միրզոյանին և Ալեքսանդր Աբելյանին, ցանկանում է իր մշակած ծրագրով շարունակել «Մշակի» հրատարակությունը: Սակայն պատրվակ բռնելով՝ գրողի պարսկահայատակ լինելը՝ իշխանությունը մերժում է նրա խնդրանքը: 1885 թ. Արծրունին վերադառնում է Թիֆլիս և զբաղվում «Մշակի» վերահրատարակման աշխատանքներով: Նա դիմում է Բաֆֆուն՝ առաջարկելով աշխատակցել լրագրին: Բաֆֆին երկար նամակով պատասխանում է Արծրունուն, ուր երևում են նրանց հարաբերությունների խզման գաղափարական, բարոյական և իրավական պատճառները: Բաֆֆին կամենում էր խմբագրության աշխատանքներում ունենալ այնքան իրավունք, որքան ունեն Արծրունին, նա պահանջում էր, որ Արծրունին ցած դնի գրիկատուորի գավազանը և բարեկամների հետ ընկերաբար վարվի: «Դուք բոլորովին կղզիացած եք, պ. Արծրունի, և այդ դրույթներն ոչ սակավ թուլացրեց ձեր եռանդը, խլեց ձեր հավատը թե դեպի աշխատանքը և թե դեպի գործը և դրեց ձեզ անխուսափելի վհատության մեջ: Դա սարսափելի դրույթն է, երբ մարդ կորցնում է հավատը: Նա սկսում է այնուհետև իր հետ պատահած ամեն շարժումների, ամեն դժբախտությունների արմատները ուրիշների մեջ որոնել, սուսանք ինքն իրեն քննելու: Նրա հավասարակշռությունը իր ներքին աշխարհի և արտաքին աշխարհի՝ հետ խախտվում է...

Դուք ապրում եք անապատի մեջ, պ. Արծրունի, ձեր մթնոլորտի օդը սաստիկ ծանրացած է, սաստիկ սպանիչ է, պետք է մի նոր հոսանք բաց թողնել այստեղ, որ կենդանություն ստանա, եթե ոչ դուք կորած եք...»³¹: Բաֆֆին առաջարկում է նաև, որ գործունեությունը վերսկսող «Մշակը» ունենա խմբագրական կազմ: Սակայն Արծրունին շարունակում է ինքնիշխան մնալ, լեռնին գրած նամակում Բաֆֆին ցավով հայտնում է, որ իր և Արծրունու միջև համաձայնություն չկայանալու պատճառով ստիպված հեռանում է լրագրից:

Բաֆֆուն հրավիրում են «Արձագանքի» խմբագրություն: Նա մերժում է Բայց հետո Շիրվանդադին խնդրանքով ընդունում է հրավերը և 1885 թ. մինչև կյանքի վերջը աշխատակցում է «Արձագանքին», որտեղ տպագրվում են «Ղարիբ մշեցին» վիպակը, «Խազմուշ» պատմվածքը, «Բերտի շունը» բանաստեղծությունը: Իսկ 1886—1887 թթ. համարներում հրատարակվում է «Սամվել» վեպը: Բաֆֆու մահից հետո «Արձագանքում» տպագրվում են նրա «Պարսկական նամակները», «Ճանճը» ակնարկը, «Պարկապուկ ածողները» գրականության մեջ հոգովածը, «Նվեր վասպուրականի արծվոյն» բանաստեղծությունը:

Բաֆֆին՝ որպես Հրապարակախոս, քննադատ, մանկավարժ և հասարակական ու քաղաքական գործիչ մեծ ճանաչում ուներ ընթերցողների շրջանում: 1882 թ. «Մշակում» հրատարակվում է «Խամսայի մեղիությունները», իսկ 1886 թ. «Արձագանքում»՝ Ապրես Բեկնազարյանցի «Գաղտնիք՝ Լարաբադի» գրքին նվիրված հոդվածը: Այս երկու ուսումնասիրությունները լրացնում են «Հրապարակախոսի» 80-ական թվականների գործունեությունը: Դրանցում երևում են հետազոտողի ու պատմաբանի սուր ու հմուտ դիտողությունները՝ պատմականության և պատմական ստեղծագործության մասին:

Բաֆֆու Հրապարակախոսական ժառանգության մեջ ամեն ինչ չէ, որ այսօր կարող ենք անվերապահորեն ընդունել: Նրա հոգովածներում կան հակասություններ, առանձին անձնական տրամադրություններ, որոնք սերտորեն կապված են գրողի ապրած ժամանակաշրջանի հակասությունների հետ: Սակայն դրանք, չունենալով էական նշանակություն, չեն կարող նսեմացնել Հրապարակախոսի փայլուն տաղանդով ստեղծված գրական հարուստ ժառանգությունը: Նրա կրթող Հրապարակախոսությունը առաջնակարգ դեր խաղաց XIX դ. 80-ական թվականներին հայ

31 ԳԱԹ, «Մշակի» ֆոնդ, № 1129:

Հասարակական մտքի զազախարական բախումների թատերարեմում: Չնայած նա կրեց մեծ դժբախտություններ ու հալածանքներ, բայց երբեք չզիջեց իր՝ առաջամարտիկի դիրքերը, երբեք չնահանջեց իր գավառած սկզբունքներից, միշտ մնաց առաջագիծ գծի դրոշակակիր: Եվ իր տաղանդի հզոր ուժով, հարազատ ժողովրդի ու հայրենիքի հանդեպ ունեցած անձնուրաց սիրով, հետադիմության ու բռնության դեմ պայքարի իր կրքոտ ու մարտնչող հրապարակախոսությամբ Բաֆֆին հասավ համաժողովրդական ճանաչման և այդպիսին մնաց առ այսօր:

ПУБЛИЦИСТИКА РАФФИ 80-ых ГОДОВ XIX ВЕКА

РОБЕРТ ДАВТЯН

Р е з ю м е

Часть статей Раффи, написанных в 1880—1886 гг., касается русско-турецкой войны и освещает тяжелые условия жизни западных армян. Статьи этого периода посвящены также опубликованным рецензиям на его произведения, переводческой деятельности, вопросам развития литературы. Одним из значительных достоинств его публицистических статей 80-ых годов является то, что писатель видел решение социальных противоречий в национально-освободительной борьбе. Статьи последних лет жизни относятся к исследованиям исторического прошлого армянского народа, литературным дискуссиям против Айкун и Агаяна.

Публицистика Раффи 80-ых годов XIX века сыграла важнейшую роль в развитии литературы, общественной мысли армянского народа.